ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «14» ապրիլի, 2017 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 21-Ա

«ՔԵՆԴԼ» ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «AREAL» ԳԾԱՅԻՆ ԱՐԱԳԱՑՈՒՑՉԻ ՎՐԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 13-ի N 379-Ա/2 հրամանը՝ «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա հետազոտությունների իրականացման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթը պատշաճ կազմակերպելու համար

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Գոհար Մելիքսեթյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի ինտերնետային կայքում:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

3. ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ՝ Ռուզան Ասատրյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացրած գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար իրականացնել տեղեկատվական խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ